Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Մեր Հայրը, մեր Ուսուցիչը

Դուք երբևէ բացե՞լ եք մասեր պարունակող տուփ, հանել հավաքման հրահանգները և մտածել. «Ես սրանից ընդհանրապես գլուխ չեմ հանում»:

Երբեմն, չնայած մեր լավագույն մտադրությունների և ներքին վստահության, մենք հանում ենք մասերից մեկը և հարցնում՝ «Ինչի՞ համար է սա» կամ «Ո՞րն է սրա տեղը»:

Մեր հիասթափությունը մեծանում է, երբ նայում ենք տուփի վրա և նկատում նախազգուշացումը, որն ասում է. «Նախատեսված է 8 տարեկան և ավելի մեծ երեխաների համար»: Քանի որ մենք դեռևս չենք կարողանում լուծումներ գտնել, մեր վստահությունը և ինքնագնահատականը չեն կարող մեծանալ:

Երբեմն մենք նմանատիպ փորձառություն ենք ունենում ավետարանի հետ: Մինչ ուսումնասիրում ենք դրա որևէ մասը, մենք կարող ենք քորել մեր գլուխն ու խորհել, թե ինչ է այն ուսուցանում: Կամ մինչ քննում ենք մեկ այլ հատված, սկսում ենք գիտակցել, որ որքան էլ ջանում ենք լիարժեք հասկացողություն ձեռք բերել, չենք կարողանում պարզել, թե ինչու է այդ հատվածը ներառված այդտեղ:

Մեր Երկնային Հայրը մեր Ուսուցիչն է

Բարեբախտաբար, մեր Երկնային Հայրը տվել է մեզ հրաշալի հրահանգներ, թե ինչպես կառուցենք մեր կյանքը և դրսևորենք մեր լավագույն եսը: Այդ հրահանգները կիրառելի են անկախ մեր տարիքից կամ պայմաններից: Նա տվել է մեզ ավետարանը և Հիսուս Քրիստոսի Եկեղեցին: Նա տվել է մեզ փրկագնման ծրագիրը, որը փրկության ծրագիրն է՝ երջանկության ծրագիրը: Նա մեզ մենակ չի թողել կյանքի ողջ անորոշության կամ դժվարությունների մեջ, ասելով. «Ահա, գնա: Հաջողություն եմ մաղթում քեզ: Փորձիր գլուխ հանել այդ ամենից»:

Եթե մենք միայն համբերատար լինենք և առաջ նայենք խոնարհ սրտով և պատրաստակամ մտքով, մենք կտեսնենք, որ Աստված տվել է մեզ բազմաթիվ գործիքներ, որպեսզի ավելի լավ հասկանանք Նրա ընդգրկուն հրահանգները կյանքում մեր երջանկության համար:

- Նա մեզ տվել է Սուրբ Հոգու անգին պարգևը, որն ունի մեր անձնական, երկնային ուսուցիչը լինելու ներուժ, մինչ մենք ուսումնասիրում ենք Աստծո խոսքը և փորձում համապատասխանեցնել մեր մտքերը և գործերը Նրա խոսքի հետ:
- Նա մեզ հնարավորություն է տալիս օրվա ցանկացած պահի դիմել Իրեն հավատքի աղոթքների և անկեղծ խնդրանքների միջոցով:
- Նա տվել է մեզ մեր օրերի առաքյալներին և մարգարեներին, ովքեր հայտնում են Աստծո խոսքը մեր օրերում և զորություն ունեն կապելու կամ կնքելու երկրի վրա և երկնքում:

- Նա վերականգնել է Իր Եկեղեցին, որը հավատացյալների մի կազմակերպություն է, ովքեր միասին աշխատում են՝ օգնելով միմյանց ահով և դողալով գործելու իրենց անձերի փրկությունը և անզուգական ուրախությունը:[1]
- Նա տվել է մեզ սուրբ գրությունները՝ Իր գրի առնված խոսքը:
- Նա տվել է ժամանակակից տեխնոլոգիաների անհամար գործիքներ, որպեսզի օգնի մեզ աշակերտության մեր ճանապարհին: Այս հրաշալի հրահանգներից շատերը կարելի է գտնել LDS.org-ում:

Ինչո՞ւ է մեր Երկնային Հայրն այդքան շատ օգնություն ապահովում մեր համար: Որովհետև Նա սիրում է մեզ: Եվ որովհետև, ինչպես Նա է ասել՝ «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[2]:

Այլ կերպ ասած, Երկնային Հայրը մեր Աստվածն է, իսկ Աստված մեր ուսուցիչն է:

Մեր Երկնային Հայրը գիտի Իր զավակների կարիքներն ավելի լավ, քան մեկ ուրիշը: Նրա աշխատանքը կայանում է նրանում, որ օգնի մեզ բոլոր շրջադարձներին, տալով մեզ հրաշալի նյութական և հոգևոր ռեսուրսներ, որպեսզի օգնի մեզ Իր մոտ վերադառնալու մեր ճանապարհին:

Ամեն հայր ուսուցիչ է

Աշխարհի որոշ մասերում հայրերին ընտանիքները և հասարակությունը պատվում են հունիս ամսին: Մեր ծնողներին պատվելը և հարգելը միշտ էլ լավ բան է: Հայրերը բազում լավ բաներ են անում իրենց ընտանիքների համար և ունեն բազմաթիվ հիանալի հատկանիշներ: Երկու ամենակարևոր դերերը, որոնք հայրերն ունեն իրենց երեխաների կյանքում, լավ օրինակ և ուսուցիչ լինելն է: Հայրերն անում են ավելին, քան իրենց զավակներին ասելը, թե որն է ճիշտը կամ սխալը, նրանք անում են շատ ավելին, քան մի ձեռնարկ նետում նրանց և ակնկալում, որ նրանք ինքնուրույն բացահայտեն կյանքը:

Հայրերն ուսուցանում են իրենց թանկագին զավակներին և իրենց լավ օրինակով ցույց են տալիս, թե ինչպես պետք է ապրել ազնիվ մի կյանքով: Հայրերն իրենց զավակներին մենակ չեն թողնում, այլ շտապում են օգնության, օգնելով նրանց ոտքի կանգնել ամեն անգամ, երբ նրանք սայթաքում են: Եվ երբեմն, երբ տարիների ընթացքում ձեռք բերած իմաստությունը հուշում է, հայրերը թույլ են տալիս իրենց զավակներին պայքարել, գիտակցելով, որ սա կարող է լինել լավագույն ուղին, որի օգնությամբ նրանք կարող են սովորել:

Մենք բոլորս ուսուցիչներ ենք

Մինչ երկրային հայրերն անում են սա իրենց իսկ երեխաների համար, ուսուցանելու հոգին մի բան է, որը մենք պետք է առաջարկենք Աստծո բոլոր զավակներին՝ անկախ տարիքից, վայրից կամ պայմաններից: Հիշեք, որ Աստծո զավակները մեր եղբայրներն ու քույրերն են. մենք բոլորս նույն հավերժական ընտանիքից ենք:

Այդ իսկ պատճառով եկեք բոլորս էլ լինենք ուսուցիչներ, ցանկություն ունենանք օգնության հասնելու և միմյանց օգնելու, որպեսզի դառնանք լավագույն էակը, որ կարող ենք: Քանի որ մենք Երկնային Հոր ազգից ենք, մենք Նրա նման դառնալու ներուժ ունենք: Աստծուն և մեր մերձավորներին սիրելը, Աստծո պատվիրանները պահելը և Քրիստոսի օրինակին հետևելը ուղիղ, նեղ և ուրախ ճանապարհն է, որը հետ է տանում դեպի մեր երկնային ծնողների ներկայություն:

Եթե տիեզերքի Աստվածն այնքան շատ է հոգում մեր մասին, որ Նա ուսուցիչ է հանդիսանում մեզ համար, հավանաբար մենք էլ կարող ենք օգնության հասնել մեր մերձավորներին՝ անկախ նրանց գույնից, ռասայից, սոցիալ- տնտեսական հանգամանքներից, լեզվից կամ կրոնից: Եկեք դառնանք ոգեշնչված ուսուցիչներ և օրհնենք ուրիշների կյանքը. ոչ միայն մեր սեփական երեխաների, այլ նաև ողջ աշխարհում գտնվող Աստծո զավակների:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Գոր. 13.52, Փիլիպպեցիս 2.12:
2. Մովսես 1.39

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Սկզբում դուք կարող եք խնդրել նրանց, ում ուսուցանում եք, մտածել այն պահի մասին, երբ Երկնային Հայրն ուսուցանել է նրանց: Ապա դուք կարող եք խնդրել նրանց մտածել այդ պահի և այն պահի նմանությունների մասին, երբ զգացել են, որ ուսուցանվել են իրենց երկրային հոր կողմից: Հրավիրեք

նրանց գրի առնել նմանությունները, թե ինչպես են նրանք ուսուցանվել: Դուք կարող եք հրավիրել նրանց կիրառել բաները, որոնք գրել են, որպեսզի ջանան ավելի լավ օրինակ լինել ուրիշների համար:

ԵՐԵԽԱՆԵՐ

Երկնային Հոր օգնությունը

Քանի որ Երկնային Հայրը սիրում է մեզ, Նա տվել է մեզ բազմաթիվ գործիքներ կամ պարգևներ՝ մեզ օգնելու համար: Սիա որոշ պարգևներ, որոնք Նա տվել է մեզ: Ինչպե՞ս կարող եք օգտագործել այս պարգևները՝ ձեր կյանքը և ուրիշներին օրինելու համար:

քահանայության զորություն
աղոթք
սեր ուրիշների հանդեպ
առաքյալներ և մարգարեներ
սուրբ գրություններ

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, June 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12866 201

Տաճարային ծեսեր և ուխտեր

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հոչակագիրը հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Փրկության և վեհացման համար անհրաժեշտ բոլոր արարողությունները ուղեկցվում են Աստծո հետ կապվող ուխտերով: «Կապել և պահել ուխտեր նշանակում է ընտրել՝ կապել մեզ մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ»,- ասել է Սփոփող Միության գերագույն նախագահ Լինդա Ք. Բըրթընը:[1]

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենն ասել է. «Տերն ասել է. «Արարողություններում է բացահայտվում . . . աստվածայնության զորությունը»:

Աստծո կողմից հատուկ օրհնություններ են նախատեսված ամեն արժանի անձնավորության համար, ով մկրտվել է, ստացել Սուրբ Հոգին և մշտապես ճաշակում է հաղորդությունից»:[2]

«Երբ տղամարդն ու կինը այցելում են տաճար,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը,- նրանք երկուսն էլ օժտում են ստանում այդ նույն զորության շնորհիվ, որը քահանայության զորությունն է . . .

. . . Բոլոր տղամարդիկ և բոլոր կանայք իրենց կյանքում օգնության համար կարող են զգալ այդ զորությունը: Բոլոր նրանք, ովքեր սրբազան ուխտեր են կապել Տիրոջ հետ և ովքեր պատվում են այդ ուխտերը, ունակ են ստանալու անձնական հայտնություն, օրհնվել հրեշտակների սպասավորումից, հաղորդակցվել Աստծո հետ, ստանալ ավետարանի լրիվությունը և, ի վերջո, Հիսուս Քրիստոսի հետ միասին դառնալ այն ամենի ժառանգորդը, ինչ մեր Հայրն ունի»:[3]

Լրացուցիչ սուրբ գրություններ

1 Նեփի 14.14, Վարդապետություն և Ուխտեր 25.13, 97.8, 109.22

Իրական պատմություններ

2007 թվականին, Պերուում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո Յոթանասունից Երեց Մարկոս Բ. Նաշը հանդիպեց ճյուղի նախագահ Վենկեսլաո Կոնդիի և նրա կնոջ՝ Պամելայի հետ: Երեց Նաշը Քույր Կոնդիին հարցրեց, թե ինչպես էին նրանց երեխաները: Ժպիտը դեմքին նա պատասխանեց, որ Աստծո ողորմածության շնորհիվ նրանք բոլորն ապահով էին և առողջ: Նա հարցրեց Կոնդիների տան մասին:

«Այն այլևս չկա»,- կարճ պատասխանեց նա:

«Բայց այնուամենայնիվ,- նկատեց երեց Նաշը,- դուք խոսելիս դեռ ժպտում եք»:

«Այո,- ասաց նա,- ես աղոթել եմ և այժմ խաղաղ եմ: Մեզ համար կարևոր բաները մնացել են: Մենք ամուսիններով ողջ ենք, երեխաները ողջ են, մենք կնքված ենք տաճարում, մենք ունենք այս հրաշալի Եկեղեցին և մենք ունենք Տիրոջը: Տիրոջ օգնությամբ մենք նորից կկառուցենք»: . . .

Ի՞նչն է, որ Աստծո հետ ուխտեր կապելիս և պահելիս մեզ զորություն է տալիս, որ ժպտանք դժվարությունների մեջ, որ օգնում է ձախորդությունները հաղթության վերածել . . .

Աղբյուրն Աստվածն է: Այդ զորությունը ձեռք է բերվում Նրա հետ ուխտ կապելով»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Լինդա Ք. Բըրթըն, «Ուխտերը պահելու զորությունը, ուրախությունը և սերը», *Լիահոնա,* նոյ. 2013, 111:
2. Նիլ Լ. Անդերսեն, «Զորություն քահանայությունում», *Լիահոնա,* նոյ. 2013, 92:
3. Մ. Ռասսել Բալլարդ, «Տղամարդիկ և կանայք Տիրոջ աշխատանքում», *Լիահոնա,* ապրիլ 2014, 48–49:
4. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Ուխտերի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2009, 19, 20-21:

Խորհեք այս մասին

Տաճարային արարողությունները և ուխտերն ինչպե՞ս են ամրացնում և զորացնում մեզ:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, June 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12866 201